Վարժություն 3 Տաճարը

Կարդացեք 2 Նեփի 5.16 հատվածը և մտածեք, թե ինչ եք սովորում նեփիական տաճարի մասին:

- Ի՞նչ եք կարծում, ինչու Նեփին և նրա ժողովուրդը այդքան մեծ ջանքեր գործադրեցին տաճարը կառուցելու համար:
- Ի՞նչ եք կարծում, ինչու է Տերն Իր ժողովրդին խնդրել և շարունակում է խնդրել զոհաբերություն անել՝ տաճարներ կառուցելու համար:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը տաճարների նպատակի և օրհնությունների մասին ասել է հետևյալը. Կարող եք դիտել «Տաճարը և ձեր հոգևոր հիմքը» տեսանյութի 4:27-5:55 հատվածը կամ կարդալ ստորև ներկայացվող խոսքերը.

Տաճարը գտնվում է մեր հավատքի և հոգևոր կայունության ամրապնդման կենտրոնում, քանի որ Փրկիչը և Նրա վարդապետությունը տաճարի հենց սիրտն են: Այն ամենը, ինչ սովորեցնում են տաճարում՝ ուսուցման և Հոգու միջոցով, մեծացնում է մեր հասկացողությունը Հիսուս Քրիստոսի մասին: Նրա կարևոր արարողությունները մեզ կապում են Իր հետ՝ քահանայության սուրբ ուխտերի միջոցով: Այնուհետև, երբ մենք պահում ենք մեր ուխտերը, Նա մեզ օժտում է Իր բժշկող, ամրապնդող զորությամբ: Օ՜, իսկ գալիք օրերին որքան ենք ունենալու Նրա զորության կարիքը:

> Մեզ խոստացվել է, որ «եթե [մենք] պատրաստված լինենք, [մենք] չպետք է վախենանք»: Այս հավաստիացումը խորը հետևանքներ ունի այսօր: Տերը հայտարարել է, որ անկախ այսօրվա աննախադեպ մարտահրավերներից, նրանք, ովքեր իրենց հիմքը կառուցում են Հիսուս Քրիստոսի վրա և սովորում են օգտվել Նրա զորությունից, չպետք է ենթարկվեն այս դարաշրջանին հատուկ տագնապներին: (Ռասսել Մ. Նելսոն, «Տաճարը և ձեր հոգևոր հիմքը», *Լիահոնա*, նոյեմբեր 2021, 93-94):

- Ի՞նչն է տպավորում ձեզ նախագահ Նելսոնի խոսքերում:

- Տաճար այցելելն ինչպե՞ս է օգնում ձեզ ավելի լավ կառուցել ձեր հիմքը Հիսուս Քրիստոսով: Կարող եք կիսվել որևէ փորձառությամբ, եթե կարող եք մտաբերել մեկը:

- Ինչպե՞ս է տաճարն ավելի մեծ երջանկություն բերել ձեզ կամ ձեզ ծանոթ մեկին:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD60013873_201_085-teacher_handout-3